ՐՈՆԸ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԵՐՍԵՍ ԱՐՔ. ՊՈՂԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԻՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԸՆԹԱՑՍ ՊԱՏԱՐԱԳԻ

(25 դեկտեմբերի)

Նախասարկավագ և առաջին մարտիրոս Սուրբ Ստեփանոս: Այսօր և երեկ երեկոյան Հայ Եկեղեցին և ի Հարկականի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Սուրբ Ստեփանոսի տոնակատարության առիթով հոգևոր ցնծության և ուրախության մեջ է: Երեկ երեկոյան Հոգևոր Ճեմարանի մի շարք աշակերտներ դպրության աստիճան ստացան: Այս առավոտյան ժամերգության ընթացքին գեղեցկորեն միաբանությունն իր Հայրապետով և Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը ի Հարկին կատարեցին Ս. Ստեփանոսին նվիրված հոգեպարար և հոգևոր, հոգեշող շարականները և մի անգամ ևս հիշատակը նախասարկավագին և առաջին մարտիրոսին պանծացրին իրենց երգերով և կատարումներով: Այսօր Ս. Ստեփանոսի տոնն է, մինչ Արևմտյան աշխարհը տոնում է Քրիստոսի ծննդյան տոնը: Մենք Քրիստոսի ծննդյան տոնը հունվարի 6-ին ենք կատարում, ինչպես վաղեմի նախնական Եկեղեցին սովորություն ուներ կատարելու: Իսկ արևմտյանները՝ դեկտեմբերի 25-ին, հեթանոսական Արև չաստծո տոնակատարությունը մոռացնել տալու համար Քրիստոսի ծնունդը բերեցին դեկտեմբերի 25-ին: Այսօր Հայ Եկեղեցին ցնծում է, որովհետև տոնակատարում է հիշատակը առաջին սարկավագին, առաջին վկային, որն իր արյունը թափեց իր հավատքի համար, իր համոզման և Քրիստոսի համար: Ո՞վ էր Ս. Ստեփանոս սարկավագը:

Նախնական Եկեղեցին, ինչպես գիտենք Գործք Առաքելոցի ընթերցումից, Քրիստոսի համբարձումից և Պենտեկոստեի հոգեգալստյան տոնից հետո, իր գոյությունը շարունակեց: Հավաքվում էին հավատացյալները Հիսուսի աշակերտների մոտ և այնտեղ աղոթում միասին, սաղմոսներ քաղում և հոգևոր երգերով լիցքավորում էին իրենց իմացական աշխարհը և ապա միասին սիրո ճաշի էին նստում: 12 առաքյալները երբ տեսան, որ իրենք արդեն չեն կարող հավատացյալների հոծ բազմությանը ծառայել, որոշեցին, որ սեղաններին ծառայող յոթ սարկավագներ ընտրվեն իրենց միջից, և այդպես էլ արեցին: Ստեփանոսը նրանցից առաջինն էր: Փիլիպպոսը, Նիկողոսը և ուրիշներ, որոնց գլուխներին առաքյալները երբ ձեռք դրեցին և ձեռնադրեցին սարկավագ: Ուրեմն, սարկավագության ձեռնադրության առաջին օրինակը առաքյալների՝ յոթ սարկավագների վրա ձեռք դնելուց է սկսվում: Եվ սարկավագները ծառայում էին սեղաններին: Կային հավատացյալ հրեաներ, որ խոսում էին հունարեն լեզվով, և կային, որ միայն եբրայեցերեն էին իմանում և դրա համար դժվար էր լինում այս երկու տարբեր լեզուներով խոսող նույն ազգի զավակներին ծառայություն մատուցանել: Միշտ էլ երևի լեզուն դժվարություն է ստեղծել առկա կյանքում իրար հասկանալու համար: Եվ, ասվում է Գործք Առաքելոցում, Ստեփանոսը Հոգով Սրբով լի էր, նշաններ էր կատարում, քարոզում էր, աղոթքներ կարդում հիվանդների վրա և բժշկում մարդկանց:

Եվ այն մարդիկ, որոնք քրիստոնյաներին հակառակ էին, եկան Լիբիայից, հրեաներ եկան Միջերկրական ծովի բոլոր եզերքներից, որոնք հրեական իրենց

ավանդապահությունը նրբորեն փորձում էին պահել, նրանք վեճի էին բռնվում Ստեփանոսի և մյուսների հետ: Գործք Առաքելոցում ասվում է, թե «Ստեփանոսը համարձակությամբ նրանց հաղթեց ու պատասխանում էր և լռեցնում բոլորին: Այդ պատճառով Ստեփանոսի կյանքը և գործունեությունը քանի որ դուր չէր գալիս այլևս հրեա մեծամասնությանն ու Մովսիսական կրոնի հետևողներին, մի օր, երբ նա քարոզում էր, նրան հափշտակեցին և դուրս տարան՝ ասելով, որ ատյանի առջև Մովսեսին և Աստծուն հակառակվում է և հայհոյալից խոսքեր ասում, մինչդեռ Ստեփանոսը ո՛չ Մովսեսին էր հակառակ և ո՛չ էլ՝ Աստծուն: Այլ ասում էր, թե Հիսուս Քրիստոս Սողոմոնի Տաճարը պիտի քանդի և երեք օրում նորը պիտի կառուցի: Այսինքն՝ Մովսիսական օրենքը պիտի ամբողջացնի՝ բերելով նաև քրիստոնեական կյանքի օրենքը՝ մարդկության և այդպիսով մարդկանց առջև պիտի բացվի դեպի Աստված տանող այն ճանապարհը, որ փրկության ճանապարհն է մեզ համար: Հավաքվածները սխալ էին հասկանում Ստեփանոսին և նրան փորձեցին բանտարկել: Տարան քաղաքից դուրս և այնտեղ ասելով, որ այս մարդը հայհոյիչ է, թե իր ավանդություններին ու պատմությանը չի հետևում, այդ իսկ պատճառով ամբոխին համոզեցին Ստեփանոսի վրա հարձակվել: Մարդկային ամբոխը կատաղած հրահրողների լեզվի պատճառով, ամենքը քարեր վերցրին և Ստեփանոսին քարկոծեցին: Ստեփանոսը երկինքը բացված տեսավ իր առջև և ասաց, որ ահա տեսնում է Աստծուն և նրա աջ կողմում կանգնած Նրա Որդուն: Սա ավելի կատաղեցրեց և քարկոծումն ավելի սաստկացավ: Այն պահին, երբ արդեն Ստեփանոսը մահվան դռանն էր կանգնած, ծունկի եկավ և Աստծուն աղոթեց. «Ո՛վ Տեր, իմ Աստված, ներիր այս մարդկանց, որովհետև սրանք մեղավոր չեն»: Եվ իր աչքերը հավերժ փակեց, հավիտենական աշխարհ փոխադրվեց: Գործք Առաքելոցի պատմիչն ասում է, թե այն մարդիկ, որոնք քարկոծում էին Ստեփանոսին, իրենց հագուստները հանձնում էին այն երիտասարդին, որ կանգնել էր մի կողմի վրա և նրանց հագուստներն էր պահում: Եվ այդ անձը Պողոս առաքյալն էր, որ հետագայում՝ Երուսաղեմի ճանապարհին նրա աչքերը ևս պիտի փակվեին աստվածային ճշմարտության լույսից:

Ահավասիկ, առաջին սարկավագի կյանքը, սիրելի միաբանքներ և ուսանողներ և հատկապես սարկավագներ: Նա իր կյանքը նվիրեց իր Եկեղեցուն, Աստծուն: Նա բոլորանվեր կերպով ծառայեց իր համայնքին՝ առաքյալների միջոցով, և նա իր ծառայության մեջ ջատագովելով Քրիստոսին, իր կյանքն ու արյունը տվեց Հիսուսի համար: Ինչքան թանկ արյուն է այս, որ թափվել է Տիրոջ՝ Քրիստոսի անվան փառաբանության համար: Այսօր, սիրելի հավատացյալներ, Եկեղեցին մեզանից մեր արյունը չի խնդրում և ոչ էլ Քրիստոս մեր արյունն է մեզանից հայցում, այլ այսօր ևս Եկեղեցին իր հալածողները ունի, այսօր ևս իր առաքյալն ունի, իր ժողովրդին առաջնորդելու համար դեպի աստվածային լուսեղեն շավիղներ: Այսօրվա հալածիչները, որոնք թափանցել են մեր ընտանիքները, մեր տները, և նրանք մեր ժողովրդի պատմական քրիստոնեական կյանքը փորձում են խաթարել, նորամուծություններ բերել և այդպիսով շեղել մեր քրիստոնեական ճանապարհը, որով ընթացողներն ենք մենք: Եվ այսպես փորձում են մեզ տանելու դեպի մութ, խավար խորխորատներ, որտեղից հոգու փրկությունը անկարելի պիտի դառնա մեր ժողովրդի համար: Նրանք եկել են մեզ քրիստոնեություն սովորեցնելու, երբ մենք Տիրոջ համբարձումից հետո արդեն

ընդգրկել էինք քրիստոնեությունը, մեզ համար դարձրել հոգու սնունդ և հոգու կյանք: Ի՞նչ իրավունքով նրանք պիտի կարողանան գալ և մեր հոգու հարստությունները կողոպտել մեզանից՝ այնտեղ դնելու համար սնահավատություն և նորնոր տեսակի մեղքերի առաջնորդող գաղափարներ: Պետք է տեր կանգնենք մեզ տրված ավանդությանը, մեզ տրված հավատքին, մեզ տրված և հանձնված քրիստոնեական դարավոր մեր Եկեղեցուն և մեր ժողովրդին, որ երկար դարեր շարունակ տառապանքների միջոցով անցնելով, կարողացավ մինչև այս օրը հասցնել Հայ Եկեղեցու նավը, և այսօր եկել ենք մարդիկ՝ այդ նավի առջև ավազակույտեր դնելու, որպեսզի այդ նավն առաջ չընթանա և խորտակվի: Այս գիտակցությունն է, որ ուզում եմ ձեր մտքի մեջ, սիրելի սարկավագ եղբայրներ, ծագի ու ծաղկի և կաղաչեմ՝ ձեր պարտականությունն է Եկեղեցու ծոցում սարկավագություն անել և այն այսօրվա իմաստով բուրվառը ձեռքին Սուրբ Սեղանին ծառայություն մատուցելը չէ միայն: Սարկավագությունը վերաբերում անել չէ միայն, և ոչ էլ ճշխարն ու գինին բերել և հանձնել պատարագիչ քահանային: Սարկավագությունը ծառայություն է ժողովրդի մեջ, քարոզչություն և նրանց մեջ լինելով, նրանց ցավն ու դարդը հասկանալու պատրաստակամությունն է մեր կողմից, որպեսզի այդ ցավին և դարդին, ժողովրդի հոգևոր և մարմնավոր պահանջներին կարողանանք փոքր-ինչ չափով օգնել և օգտակար լինել:

Այս գիտակցությունն է, որ կփափագեի այսօր ձեր մտքի մեջ դնել և ձեզ առաջնորդել ծառայության դեպի մի ճանապարհ, որ կտանի զոհողության միջոցով դեպի լույսը Քրիստոսի: Ինչ լավ է, որ այսօր ամպամած եղանակին, Հայաստանի այս ցրտաշունչ օրերին, Հայ Եկեղեցին ունի այսպիսի սրբազան տոնակատարություն: Եվ ձեզ կխմբե միասին և կտոգորե հավատքի կայծերով: Սուրբ Հոգին մեզ կուժեղացնե և մեր հոգու մեջ կդնե աստվածային անմար կրակի կայծը, որպեսզի մեր հավատքի ջահը, հավատքի կրակը երբեք չմարի, այլ միշտ մնա առկայծ և երբեմն բոցավառվող հավատքի ուժով: Որպեսզի այդ բոցավառմամբ բոցավառենք նաև մեր նմանների հոգիները և սրտերը: Թող Աստված մեր սարկավագ եղբայրներին տա իմացականության լույսը և տեսիլքը ծառայության և մեզ ևս այս գեղեցիկ պահին թող Սուրբ Հոգին իր շնորհներով օժտի՝ ծառայելու համար Աստվածային Սուրբ Սեղանին: Թող Սուրբ Ստեփանոսի հավատքի լույսն ու կյանքը անմար մնան մեր սարկավագների, ինչպես նաև մեր սաների մեջ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն: